/Նախարարության անվանումը/

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Վ. Դավթյան

- **ԵՐԿԻՐ /ՔԱՂԱՔ / ԺԱՄԿԵՏ**

Թաիլանդի Թագավորություն, Բանգկոկ, 14.10-15.10.2018թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից 2018թ. հոկտեմբերի 14 - 15-ը մասնակցել եմ Թաիլանդի Թագավորության Բանգկոկ քաղաքում կազմակերպված «Քաղաքականություն-տվյալներ կապը. Եվրամիություն- Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների փորձի փոխանակում» թեմայով տարածաշրջանային բարձր մակարդակի աշխատաժողովը:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

1. Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) 2030 թվականի օրակարգի համար պաշտոնական վիճակագրության իրականացման շրջանակի և հավաքական տեսլականի ամրապնդումն ու իրականացումը,
2. Ազգային մակարդակում քաղաքականություն-տվյալներ կապի ապահովումը,
3. Վերոնշյալ երկու ոլորտներում ազգային ջանքերի աջակցման համար արդյունավետ գործընկերության ստեղծումը՝ տարածաշրջանային և ենթատարածաշրջանային մակարդակներում:
4. ԿԶՆ ցուցանիշների արտադրության համար հաստատությունների միջեւ տեղեկատվության փոխանակման բարելավում,
5. Հաջորդ քայլերը ՝ տարածաշրջանային ջանքերի եւ Եվրամիություն- Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների վիճակագրության կոմիտեի միջոցով գործընկերության աջակցության ամրապնդման համար:
6. Կապի տեղեկատվական եւ սոցիալական գործառույթները՝ հիմնվելով ցուցանիշների վրա,
7. Պետական բյուջեն կայուն զարգացման բնագավառում՝ Ֆինլանդիայի օրինակով,
8. Ավստրալիայում վարչական տվյալների փոխանցումը,
9. Եվրոպական վիճակագրական համակարգի կառավարումը,

Աշխատաժողովն ուղեկցվում էր քննարկումներով, որոնց նպատակն էր՝ տարբեր երկրների պայմաններին համահունչ գնահատել հմտությունների զարգացման համակարգերի նորարարական կիրառելիության հնարավորությունները:

- ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատաժողովին մասնակցությունը հնարավորություն ընձեռնեց ուսումնասիրել տարբեր երկրների փորձը, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային աջակցությունը՝ ազգային ջանքերին և տարածաշրջանային փորձին:

- **ՆՇՈՒՄՆԵՐ**

Աշխատաժողովի հետ կապված բոլոր ծախսերը ֆինանսավորվել են Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից:

ՀՀ վիճակագրության պետական
խորհրդի անդամ՝ Վ. Դավթյան